

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
2014 ԹՎԱԿԱՆԻ ՆՈՅԵՄԲԵՐԻ 19-Ի N1325-Ն
ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

ՆԱԽԱԳԻԾ

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ
ՈՐՈՇՈՒՄ**

«__» _____ 2023 թ. N ____-Ն

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2014 ԹՎԱԿԱՆԻ
ՆՈՅԵՄԲԵՐԻ 19-Ի N1325-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ
ՄԱՍԻՆ**

Ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 33-րդ ու
34-րդ հոդվածները՝ Կառավարությունը որոշում է.

1. Հայաստանի Հանրապետության կառավարության 2014 թվականի
նոյեմբերի 19-ի «Հանրային ծանուցման և քննարկումների
իրականացման կարգը սահմանելու մասին» N1325-Ն որոշման
հավելվածի 13-րդ կետում «Հայաստանի Հանրապետության
պաշտոնաթերթում» բառերը փոխարինել «առնվազն 3000, իսկ դրա
անհնարինության դեպքում՝ առնվազն 1000, իսկ դրա անհնարինության
դեպքում՝ «Չանգվածային լրատվության մասին» օրենքի 3-րդ հոդվածի
2-րդ մասի 2-րդ կետի 1-ին կամ 4-րդ ենթակետերով սահմանված
զանգվածային լրատվության այլ միջոցներով» բառերով:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը
հաջորդող օրվանից: